Տ. ԵՂՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(29 հունվարի 2006 թ.)

Մի առիթով, երբ Քրիստոսի աշակերտները խոսում էին միմյանց հետ տարբեր հարցերի մասին, նաև մտածում էին, թե իրենցից ով է ավագը, ով է կրտսերը, ով ավելի իշխանություն պիտի ունենա մյուսի նկատմամբ, Քրիստոս նրանց պատվիրեց՝ ասելով. «Տեսեք, ինչպես Ես և Իմ Հայրը մեկ ենք, այնպես էլ դուք մեկ պետք է լինեք: Եվ որպեսզի դուք մեկ լինեք, միակ օրենքը, որ պետք է իշխի ձեր հարաբերությունների մեջ, դա սերը պետք է լինի»:

Քրիստոսի աշակերտները համբարձումից հետո, հետևելով մեր Տիրոջ պատվիրանին, ցրվեցին, տարածվեցին աշխարհի բոլոր երկրները՝ չորս ծագերը, և սկսեցին Քրիստոսի Ավետարանը քարոզել մարդկանց: Շուտով նրանց միացան ուրիշներ՝ քարոզիչներ, որոնք երբեք մեր Տիրոջը չէին տեսել, ինչպես, օրինակ՝ Պողոս առաքյալը, Բառնաբասը, Փիլիմոնը: Նրանք ևս սակայն նույն հաջողությամբ կատարեցին Աստծո կողմից իրենց վստահված պարտականությունը՝ տարածելով Ավետարանի լույսը և հիմնելով եկեղեցիներ տարբեր-տարբեր քաղաքներում, տարբեր ժողովուրդների համար և տարբեր երկրների մեջ:

Երբ նայում ենք առաջին դարերի եկեղեցական կյանքին, տեսնում ենք, որ այն ժամանակ աշխարհի համար ծանոթ գրեթե բոլոր երկրներում և բոլոր ազգությունների մեջ հաստատվեցին Քրիստոսի տեղական եկեղեցիները, սակայն այնուհանդերձ կար մեկ Եկեղեցի, դա Քրիստոսի Եկեղեցին էր: Դարերի ընթացքում, դժբախտաբար, Քրիստոսի Եկեղեցին բաժանվեց մի քանի մասերի: 6-րդ դարի սկզբին՝ 518 թվականից հետո վերջնականապես առաջին բաժանումը տեղի ունեցավ Քրիստոսի Եկեղեցու մեջ, երբ արևելյան ազգությունների եկեղեցիները և արևմտյան եկեղեցիները բաժանվեցին միմյանցից:

1054 թ. նոր բաժանում առաջացավ արևմտյան եկեղեցու մեջ, երբ Բյուզանդական Եկեղեցին բաժանվեց Հռոմի Եկեղեցուց: Միջին դարերում, ավելի ուշ Մարտին Լյութերի և նրա կողմնակիցների քարոզությամբ Հռոմեական Եկեղեցու մեջ բաժանում տեղի ունեցավ, և Հռոմից բաժանվեցին բազմաթիվ եկեղեցիներ, որոնք այսօր գոյություն ունեն, գործում են, որոնց մենք կոչում ենք Բողոքական Եկեղեցիներ: Սակայն սկսած առաջին բաժանման օրից իսկ եկեղեցու առաջնորդների մտքերի մեջ, հոգիներում և սրտերում միշտ Աստծո ձայնը խոսում է, և նրանք միշտ անհրաժեշտություն են զգում միավորվելու:

12-րդ դարում, երբ Հայ Եկեղեցին իր մասնակցությունն էր բերում եկեղեցիների միության գործին, ինչպես Բյուզանդական Եկեղեցու հետ, այնպես էլ Հռոմեական Եկեղեցու հետ, Վրաց Եկեղեցու հետ, նաև որոշ բանակցություններ էր վարում Ասորի

Եկեղեցու հետ, որովհետև որոշ տարաձայնություններ էին առաջացել վերջինիս հետ, այդ ժամանակ գումարված ժողովներից մեկում, որ կոչվում է Հռոմկլայի ժողով, մեր Եկեղեցու վարդապետներից Ներսես Լամբրոնացին, որը հիմնական բանախոսն էր այդ ժողովի, ասում է. «Քրիստոսի Եկեղեցին մեկ էր՝ իբրև մեկ տուն: Սատանային հաջողվեց այդ տունը փլուզել, քանդել, մասնատել և տարբեր-տարբեր եկեղեցիներ ստեղծել: Մեր պարտականությունն է, որպես Քրիստոսի Առաքյալների հաջորդների, նորից վերաշինել այդ Տունը, որ Քրիստոս մեկ եկեղեցի ունենա և ոչ թե իրարից բաժանված եկեղեցիներ»:

Փառք Աստուծո, որ 20-րդ դարը մեզ պարգևեց Էկումենիզմի, փոխհասկացողության և քրիստոնեական սիրո վարդապետությունը և եկեղեցիները միացան քրիստոնեական սիրո մեջ, վերացավ անհանդուրժողությունը, վերացավ թշնամանքը և տիրեց միմյանց սիրելու, հասկանալու և ընդունելու քաղաքականությունը: Անշուշտ մենք տակավին շատ հեռու ենք՝ հասնելու այն բաղձալի օրվան, երբ Քրիստոսի Եկեղեցին նորից պետք է միանա և ունենա մեկ հոտ և մեկ հովիվ: Մեկ հոտը մենք նկատի ունենք բոլոր քրիստոնյա ժողովուրդները միասին վերցրած և մեկ հովիվը՝ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս: Հեռու է այդ օրը, սակայն այդ օրվա մոտենալու համար անհրաժեշտ են որոշակի գործողություններ:

Սիրելի հավատացյալներ, այսօր ուրախ եմ նշելու, և դուք հավանաբար արդեն զգացիք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հյուրընկալել է քրիստոնեական տարբեր եկեղեցիների պաշտոնական ներկայացուցիչների: Այստեղ օրեր առաջ իր աշխատանքներն սկսեց Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու և Արևելյան Քույր Եկեղեցիների՝ Հայ, Ասորի, Ղպտի, Եթովպական, Հնդիկ Մալանկարա, պաշտոնական ներկայացուցիչների համատեղ հանձնաժողովը, որ երրորդ հանդիպումն է անցկացնում, և այս երրորդն արդեն Ս. Էջմիածնում է: Այս հանձնաժողովը փնտրում է այն ուղիները, որոնք մեզ պետք է բերեն միության ճանապարհին: Ես խնդրում եմ ձեր բոլորին, որ աղոթք բարձրացնեք առ Աստված, որպեսզի Աստված լուսավորի մեր բոլորի մտքերը, որպեսզի Աստված ջերմություն սերմանի մեր սրտերի մեջ, և պայծառություն տա մեր մտքերին, որպեսզի մենք կարողանանք չշեղվել, այլ ընթանալ այն ուղիղ ճանապարհով, որ տանում է դեպի միություն: Չմոռանանք, որ սատանան դեռ գոյություն ունի, սատանան դեռ ապրում է և սատանան դեռ գործում է:

Այսօր մենք նաև տխրությամբ անդրադառնում ենք, և պիտի հաղորդեմ ձեզ, որ վերջին օրերին ի Տեր փոխադրվեց Հնդիկ Մալանկարա Եկեղեցու կաթողիկոսը՝ Մատթեոս Բասիլիոս Բ Մար Թոման, և որի հոգու հանգստության համար մենք պիտի կատարենք հոգեհանգստյան արարողություն, և խնդրում եմ, որ դուք բոլորդ ձեր աղոթքները առաքեք առ Աստված, որպեսզի Նա Իր ծառային իսկապես արժանացնի Երկնքի Արքայությանը և միշտ Իր մոտ պահի. ամեն: